ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՄԵԾԱՐԳՈՅ
ՏԻԱՐ ՖԱԴԷՅ ՍԱՐԳՍԵԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԵՐԵՒԱՆ

Սրտի խոր վշտով իմացանք ցաւալի լուրը ՀՀ ԳԱԱ-ի փոխնախագահ և բազմավաստակ արևելագէտ ու հայկաբան ակադեմիկոս Գագիկ Սարգսեանի մահուան:

Նրա հարուստ վաստակը հայոց պատմութեան լուսաբանման և լեզուի ու գրականութեան ուսումնասիրութեան բնագաւառներում անմոռանալի է մեր ժողովրդի մօտ, յատկապէս համալսարանական, մտաւորական և ակադեմական շրջանակներում:

Մեծ է նաև նրա դերը հայագէտների նոր սերնդի կազմաւորման գործում: Որքա՜ն գիտնականներ հայոց պատմութեան պեղման իրենց սկզբնաքայլ ջանքերի մէջ առաջնորդուեցին նրա ցուցմունքներով և ուսուցողական մեթոդներով:

Վերջին երեք տարիներին նրան անձնապէս ճանաչելու ուրախութիւնն էինք ունեցել: Նրա հայագիտական աշխատանքը և դասախօսական-ուսուցչական գործը արդիւնք էր նրա սիրոյն և նուիրումին իր հայրենիքին և ժողովրդին:

Անձնապէս և յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացնում ենք Ձեզի, Ակադեմիայի Նախագահութեան և բոլոր անդամներին և հանգուցեալի ընտանիքին մեր խորագոյն ցաւակցութիւնները:

Թող Բարձրեալն Աստուած նրա հոգին ընդունի Իր երկնային երանաւէտ խաղաղութեան մէջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

31 Օգոստոս 1998